ՏԱԹԵՎԻԿ ԱՇՉՅԱՆ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի լեզուների ամբիոնի,
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի
հայոց լեզվի ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու
tatev-ashchyan@yandex.ru
ՀՏԴ 82(091)

ՄԵՐ ԱՆԻՄԱՍՏ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր. փոքր արձակ, Նահանջի գրականություն, թեմատիկ-գաղափարական հարցադրումներ, սփյուռքի հայտնի տագնապներ, ստեղծագործական կյանքի բնութագիր, համատարած անտարբերություն, գաղջ իրականություն, խորհրդանիշների համակարգ, «Հարալեզներուն դավաճանություն» պատմվածք, մտքերի ներհոսք:

Ключевые слова: малая проза, литература отступления, теметческо-идеологические запросы, известные тревоги диаспоры, характеристика творческой жизни, вездесущее безразличие, удушливая действительность, система символов, рассказ <<Измена аралезов>>, приток идей.

Key words: Short prose, the Literature of Recession, thematic and ideological questions, famous fears of Diaspora, characteristics of creative life, pervasive indifference, apathetic reality, a system of symbols, “Treason of Aralezes” story, inflow of ideas

1915թ. Աղետից հետո արևմտահայերի փրկված զանգվածները ծվարեցին աշխարհի տարբեր անկյուններում՝ իրենց հետ տանելով լոկ հուշեր հեռավոր հայրենիքից: Իսկ հրաշքով փրկցած «մնացորդացն» էլ քեմալականների ասպարեզ գալուց հետո ստիպված լքեց հայրենիքն ու հեռացավ օտար ափեր:

Կյանքի ծանր պայմաններն ու համատարած հիասթափությունը սակայն չխոչընդոտեցին գրական մտքի զարգացմանը, և 1920-ական թվականներին սփյուռքահայ գաղթօջախներում իրենց առաջին գրքերով հանդես եկան մի շարք երիտասարդ հայ գրողներ: Սփյուռքահայ գրականությունը զարգացավ երկու հիմնական ուղով՝ նախաեղեռնյան գյուղը (Համաստեղ, Մնձուրի, Շուշանյան, Հայկազ և այլք) և սփյուռքի առօրյան (Շահնուր, Որբունի, Զարդարյան, Հայկ և ուրիշներ): Գրականության առաջին որակը պայմանականորեն ընդունված է անվանել «կարոտի» գրականություն, իսկ երկրորդը որակվում է իբրև «նահանջի»

գրականություն, որ ներառում էր ներկա կյանքի կենսապահանջներն ու ինքնահաստատման փորձերը, սփյուռքի հայտնի տագնապները: Վերջինիս անդրադառնալով՝ գրականագետ Վազգեն Գաբրիելյանը գրում է. «Նահանջի ընդհանուր անվանումով գրականությունը, որ պատկերում է սփյուռքահայության առօրյան, թեմայի շրջանակի մեջ առավ մի շարք միկրոթեմաներ, ինչպես ասենք՝ կապիտալի աշխարհը և հայ գաղթականության գոյատևման հարցը, սոցիալական վիճակը (Հայկ, Նուրիկյան, Զարդարյան), նոր բարքերի և ազգային-ավանդական կենսաձևերի բախումը, ուծացման վտանգը (Շահնուր, Շուշանյան, Հայկ, Որբունի), սփյուռքահայության հետագա ճակատագրի խնդիրները, ներգաղթը, Հայաստան-Սփյուռք հարաբերությունը և այլն (գրեթե բոլոր արձակագիրները): Այս թեմաները, անշուշտ, տարանջատված չեն, երբեմն ընդգծվում է մեկը կամ մյուսը, բայց առավելապես պատկերվում են միասնաբար, իրար ներհյուսված»[1]: Իր հերթին եղեռնով ընդհատված սփյուռքահայ գրական ուղիների տարանջատման մասին ինքնատիպ բանաձևում ունի գրականագետ Սուրեն Դանիելյանը. «Սփիւռքահայ գրականութեան պատմութեան մէջ բախման ուղղակի կիզակէտ կայ ազգային անցեալի նշանակութեան եւ ճշմարտութեան փիլիսոփայական ընկալման սկզբունքի որոնումների միջեւ: Գրողը, յատկապէս այդ գրականութեան արշալոյսին, յաճախ էր հակւում դէպի ազգային ռոմանտիզմի փորձուած հունը, ուր ազգայինը գունային բացառիկ ներկապնակ ունէր:…Մեր գիտական նպատակներից մեկը երկրորդ բաղադրիչ տարրի՝ գրական նոր ճշմարտութեան որոնումներին, նրանց տեսակարար կշռի զօրացման ընթացքներին հետամուտ լինելն է, որն իր մէջ ներառում է *Նահանջի,* գիտակցական ներհոսի, իրապաշտական շարժման ուրուագծերը…»[2]:

Սփյուռքահայ գրականության մեջ նահանջի երգը առաջինը վիճակվեց հնչեցնելու Շահան Շահնուրին, որն ընդհանրացնում էր մտավորականների՝ եղեռնով ընդհատված ստեղծագործական կյանքի բնութագիրը և նրանում տեղ գտած նոր որակները: Հայտնվելով օտար միջավայրում և ականատես լինելով գաղթահայի հոգսերին՝ նա շատ լավ գիտակցում էր, որ անցյալի մասին քաղցր հուշը ոչնչով օգնել չի կարող, այն բավարար չէ ելք փնտրելու համար: Անհրաժեշտ էր հայացքը ուղղել առօրյա հարցերին՝ կտրուկ շրջադարձ կատարելով դեպի նոր նյութերի ճանաչումը,

[1] Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Եր., 1994, էջ՝ 65:

[2] Ս. Դանիէլեան, Միջուկի տրոհումը, սփյուքահայ գրականութեան պատմութիւն, ներածութիւն, Եր.,2011, էջ՝ 12:

իրապաշտական ներկան, ասել է թե՝ հակադրվել անցյալի գրական արժեքներին: Այս առիթով Ս. Դանիելյանը նկատում է. «Աւելի լայն առումով Կարօտի եւ Նահանջի բախումն արտահայտում էր մեր գրականութեան մէջ հնուց եկող վէճը իրապաշտական եւ ռոմանտիկական հայեացքների շուրջ...»[3]: Շահնուրը սկզբունքորեն դեմ էր այն «լալկան» գրականությանը, որի գրանյութը հովվերգական գյուղն էր՝ «քաղցր կարօտը», ուստի բացարձակ հայտարարում էր. «Ես՝ անցեալէս բարձր»: Նա հակադրվում էր գրական այն մոտեցմանը, թե «պէտք է գիւղի մասին գրել, տարագիրներուս մէջ վառ պահելու հայութիւնը»[4]:

1929թ. լույս տեսավ գրողի երախայրիք վեպը, որ հենց այդպես էլ կոչվում էր՝ «Նահանջը առանց երգի»: «Հենց նրա թեթեւ գրչով էլ, ելնելով «Նահանջը առանց երգի» վէպի խորագրի ծրագրային նշանակութիւնից, շարժումը կոչուեց Նահանջի գրականութիւն»[5]: Երբ Շահնուրը ձեռնարկեց իր վեպը (1927թ.), նահանջը՝ որպես երևույթ, արդեն տագնապ էր հարուցում սփյուռքահայ գրական շրանակներում, մտահոգության տեղիք տալիս: «Նահանջի թեման՝ աշխարհով մեկ ցրված հայության ձուլումը, ազգայնության, լեզվի, հիշատակների կորուստը, գեղարվեստական հնարանք չէր, այլ դաժան ճակատագիր, տևական ծավալվող, ամենօրյա իրական»[6],- նկատում է Ստեփան Թոփչյանը:

«Գրականութենէն անդին եւ այլուր» հոդվածում Շահնուրը հստակ ձևակերպում է գրական ստեղծագործության նպատակի ու նշանակության հարցը, ցույց տալիս, որ գրողը պետք է ժողովրդից վերցնի նրան ամենից շատ հուզող գաղափարը և գեղարվեստի զորությամբ վերադարձնի ժողովրդին: Խոսելով ծրագրային վեպի հիմնական թեմատիկ-գաղափարական հարցադրումների մասին՝ հեղինակը գրում է. «Ան կ'եռար եւ կը բորբոքէր գաղթական ժողովրդին մէջ, որոնցմէ մէկն է միայն Նահանջը: Այլ խոսքով, գրագէտները ժողովրդին տուին այն, ինչ որ ժողովրդինն էր…»[7]: Շահնուրի այս վեպը իրավամբ սփյուռքահայ գրականության մեջ դպրոց ստեղծած մի երկ է, որի գեղարվեստական արժեքը գիտակցում էր նաև ինքը՝ հեղինակը. «Երկարակեաց գրքերն ունին մասնավոր ճակատագիր մը: Անոնք կը գտնեն բացի նոր համակիրներէ, նոր

[3] Ս. Դանիէլեան, Միջուկի տրոհումը, սփյուքահայ գրականութեան պատմութիւն, ներածութիւն, Եր.,2011, էջ՝ 171:
[4] Շ. Շահնուր, Թերթիս կիրակնօրեա թիւը, Պէյրութ, 1958, էջ՝ 18:
[5] Ս. . Դանիէլեան, Միջուկի տրոհումը, սփյուքահայ գրականութեան պատմութիւն, ներածութիւն, Եր.,2011, էջ՝ 170:
[6] Շ. Շահնուր, Երկեր, Եր., 1982, էջ՝ 249:
[7] Շ. Շահնուր, Զոյգ մը կարմիր տետրակներ, Պէյրութ,1967, էջ՝ 91:

քննադատներ, որ կը տարազեն նոր քննադատութիւններ: Նոյնը պատահեցավ Նահանջի գլխուն»[8]:

Առհասարակ Շահան Շահնուրի ամբողջ ստեղծագործությունը մեր առջև բացում է արտասովոր ու ինքնատիպ գրող-անհատին, որի անսովոր, «ազգային նիհիլիզմի» տարրերով հագեցած մտածողությունը ստիպում է լրջորեն վերաբերվել նրա գրչին պատկանող բառին ու արտահայտությանը: Հեղինակի բոլոր գործերում՝ լինեն դրանք գրական-գեղարվեստական ստեղծագործություններ թե հրապարակախոսական-քննադատական հոդվածներ, ակնհայտ երևակվում է ներկայի համատարած անտարբերությանը չենթարկվող, տևականորեն ուղիներ փնտրող (երբեմն անգամ ոչ ավանդական ուղիներ) ու երբեմն էլ ծայրահեղ եզրահանգումներ անող մտավորականը:

Ուծացման թեման՝ որպես սփյուռքի գլխավոր տագնապ, տարածվում է «Նահանջը առանց երգի» վեպի պարագծից դուրս և նոր զարգացումներ ստանում Շահնուրի փոքր արձակում, մասնավորապես՝ «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածաշարում (1933թ.), ուր առաջադրված են նույն գաղափարական հարցադրումները՝ այլ երանգավորմամբ ու այլ հերոսների շուրթերով:

Ըստ էության՝ ժողովածուի պատմվածքները կարելի է բաժանել 2 հիմնական թեմաների՝ պոլսահայերի կյանքին վերաբերող դրվագներ, ուր պատկերված է խղճուկ մարդկանց կյանքի գաղջ իրականությունն ու համատարած ձանձրախտը («Առավոտեան շեփոր», «Մանուկ մը տարեցներուն մէջ», «Հոսանքին եզրը»), և փարիզյան իրականության մեջ հայտնվածների առօրյան, ուր անխուսափելի է նահանջը («Հարալեզներուն դավաճանությունը», «Զաթոսթե», «Պճեղ մը անուշ սիրտ», «Դերձակ մը, իր հյուրերը և զանազան դեպքեր»): Սակայն «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածաշարի գլխավոր մտահոգությունը մնում է նահանջը, որի տագնապը գնալով ուժեղանում է: Գրողն ապրում է այդ նույն իրականության մեջ և մարգարեանում՝ շեշտելով, որ վաղը այն էլ ավելի պիտի ծավալվի և ***«ամբողջութեամբ կլանի ապագայի սերունդներուն»:***

Արձակագիրը սիմվոլներով խորհելու հակում ունի և գրեթե բոլոր գործերում ներմուծում է այդ յուրօրինակ հնարքը: Առաջին հայացքից թվում է՝ ամենն այնպես է, ինչպես ներկայացնում է հեղինակը, սակայն նրա գործերի քննության առավել խոր հատույթում բացահայտվում են նորանոր շերտեր, որոնք ընթերցողի առջև բոլորովին այլ իրականություն են ուրվագծում:

[8] Նույն տեղում, էջ՝ 97:

Շահան Շահնուրի տաղանդի վառ ապացույցն է «Հարալեզներուն դավաճանությունը» համանուն վերնագրով պատմվածքը, ուր հեղինակը խորհրդանիշների համակարգը՝ իբրև գեղարվեստական ճանաչողության հուն, հասցրել է կատարելության: Պատմվածքի հերոսը՝ Համբարձումը, ողջ հայ ժողովրդի մարմնավորումն է, ավելի ճիշտ՝ գաղթահայության մարմնացումը: Եվ պատահական չէ այն, որ նրա անունը Համբարձում է. այս կերպ գրողն ամրագրում է իր մեծ հավատը հայության լինելիության հանդեպ: Ինքնատիպ և միևնույն ժամանակ խորհրդանշական է պատմվածքի վերնագիրը. հարալեզները հնուց ի վեր հայտնի են եղել իբրև նվիրվածության և հավատարմության խորհրդանիշ, որոնք, սակայն, ի վիճակի չեն եղել փրկություն բերել: Ըստ էության՝ պատմվածքի հերոսն էլ ներկայացված է իբրև հենց այդ հարալեզներից մեկը, որ բոլոր հայ երիտասարդների նման նահանջող տեսակ է, այսինքն՝ դավաճանող հարալեզ: Շահնուրյան այս ըմբռնումին հետագայում հակադրվելու էր հայրենիքի հանդեպ անսպառ և կույր հավատ ունեցող մտածողների մի այլ տեսակետ, ըստ որի՝ «յարալեզները այլեւս հաշտ են»: Խոսքը վերաբերում է Վահե-Վահյանի «Յարալեզներուն հաշտութիւնը (Հայրենական յուշեր)»[9] վերնագրով հուշգրություն-ակնարկին, որը Խորհրդային Հայաստանի իրականությունը, հայրենիք ներգաղթած սփյուռքահայերի կյանքը վառ և լավատեսական նրբերանգներով ներկայացնելուց զատ՝ որոշակի գաղափարական բանավեճ էր հրահրում սփյուռքի գրականության մեջ ձևավորված ընդհանուր հայացքի հետ: Անշուշտ, համադրումի ենթատեքստը քաղաքական բնույթ ունի նաև, որի խնդրառությունը, ինչպես ժամանակին նկատվել է, եղել է «հիմնովին ազատագրվել հոռետեսական տրամադրություններից, վերացականությունից և բանաստեղծական ճշմարիտ խոսքի միջոցով հասնել իր ժողովրդի կյանքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական վերափոխությունների, հայրենի երկրի գալիքի, նրա պայծառ ապագայի պատմական ճշմարտության ճանաչմանը»[10]: Իսկ Շահան Շահնուրը, ինչպես Արծրուն Ավագյանն է նկատում, «նկարագրական պատումի փոխարեն բերում է մտածումի գրականություն, ստիպում ընթերցողին ոչ միայն ազգային ինքնասիրության վիրավորվածություն զգալ, այլև խորհել, մտատանջվել ու կասկածի ենթարկել սրբացած շատ արժեքներ»[11]: Ինչ վերաբերում է Վահե-Վահյանի

[9] Վահե-Վահեան, Յարալեզներու հաշտութիւնը, Պէյրութ, «Անի» մատենաշար, թիւ 6:
[10] Համազասպյան Վ., Հիսուն տարի պատնեշի վրա, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Եր., 1983, 23 նոյեմբերի:
[11] Ավագյան Ա., Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Եր., 2004, էջ՝ 123:

հուշապատում-ակնարկին, ապա առանց կոնկրետ հղումների, անունների հիշատակման էլ առարկայականորեն ճանաչելի է «Յարալեզներուն հաշտութիւնը» վերնագրի և գաղափարական մտահաղացման ներքին դիմադրությունն ու հակակշիռը: «Դարանափոխ դարերու ստրկութենէ մը հետոյ դարձեր ենք նորէն հայրենական հավատքին, եւ Յարալեզները հաշտ են այլեւս մեզի հետ»[12],- գրում է Վահե-Վահյանը՝ «հաշտ են» արտահայտությամբ ակնարկելով Շահնուրի կիրառած «դավաճանությունը»: Սակայն վերադառնանք շահնուրյան հարալեզներին:

Ինչպես մյուս գործերում, այնպես էլ այս պատմվածքում հերոսը հավաքական կերպար է, որն ամփոփում է ողջ նահանջող հայության հատկանշական գծերը: «Նա (Համբարձումը-Տ. Ա.) մի նոր Սուրեն է կամ Սուրենի, Պետրոսի ու Լոխումի խառնուրդով մի նոր նահանջող հոգի, որ և՛ տառապում է՝ գիտակցելով օտարացման, նահանջի վտանգը, և՛ ըմբոստանում է, և՛ միասնության ու ձուլմանը դեմ կանգնելու կոչ անում, թեև ինքն էլ մեկն է այդ նահանջողներից»,[13]- ընդհանրացնում է Վ. Գաբրիելյանը և շարունակում,- «Նախկին արևմտահայը այժմ ֆրանսահայ էր, լիբանանահայ, ամերիկահայ…, սփյուռքահայ և պարտադրված էր ապրել նոր ապրելավայրի օրենքներով…Գրականության հերոսը պիտի դառնար իր գոյատևության համար տքնող, անկամորեն ուծացող կամ ուծացման վտանգի դեմպայքարող, կորցրած հայրենի տան կարոտից տառապող ու վերադարձի հույսը փայփայող տարագիր հայը՝ իր ճակատագրի մասին մտատանջող խոհերով»:

Ահա այդպիսին է նաև Համբարձումը. նա խոսում է մեծ հերոսի ոգու հետ, որը երիտասարդին տարբեր անուններով է կոչում: Ոգին փնտրում է իր նման մեկին, որպեսզի նոր ուժով ի մի հավաքի ցիրուցան եղած ժողովրդի բեկորները. ահա թե ինչու է նա ասում. «Ես ուզեցի քեզ գտնել այն ճամփուն վրայ, որ երեք անգամ կը բարձրանայ, հոգ չէ, թէ տեղ մը չի տանիր»: Այս նախադասությունն ամփոփում է շահնուրյան այն գաղափարը, թե արթնացումի ձգտումն ավելի ճիշտ է, քան բուռ համակերպումը: Նահատակված հերոսի ոգին բարձր ու լավատեսական գաղափարների կրողն է, սակայն իրականությունը բոլորովին այլ է. Ատնա կոչեցյալը, որ հետագայում պիտի Ժագո հորջորջվի, հայտվել է մի ճանապարհի վրա «որ թեև տեղ մը չի տանիր, բայց որ երեք անգամ կը

[12] «Անի» ամսագիր գրականութեան ու արուեստի, Պէյրութ, 1949, Գ. Տարի, սեպտեմբեր, թիւ 11, էջ՝ 583:

[13] Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., 1994, էջ՝ 105:

ցածնայ»[14]: Հեղինակն այսկերպ մատնանշում է այն անմխիթար ու անլույս վիճակը, որ հատուկ է օտարության մեջ հայտնված ամեն մի հայի, ինչ էլ լինի նրա անունը: Ասվածը ընկալվում է որպես համազգային ողբերգություն, համատարած նահանջ, որ առաջացրել էր հուսալքում ու անտարբերություն: Ատնան ցիրուցան եղած հայության խորհրդանիշն է, որ մեծ աղետից հետո ապրեց առավել մեծ հիասթափություն: Խոսքը «սպիտակ ջարդ»-ի միջով անցած հայության բեկորների մասին է, որն անմիջապես հաջորդեց Մեծ եղեռնին՝ մարդկանց մեջ սերմանելով թմրածություն ու անտարբերություն, երազել տալով միան մահ ու հանգստություն. «Դուն կը պառկիս կռնակին վրայ՝ սպասելով, որ գիշերը քու լքուած միսերդ հողին տակ ղրկէ եւ քնանաս: Հրաժարած ամէն բանէ՝ այլեւս միայն մեռնիլ կ’ուզես, կ’ուզես քուն, անվերջ քուն: Ո՜վ Ատնան, բոլոր շուկաներուն վրայ ծախու ելած ողնասիւներդ տեսայ: Շուկաներուն վրայ ծախու ելած քու բազմաթիւ սիրտերդ տեսայ: Վերջինը՝ քսանըհինգ տերեկանի սիրտդ՝ յափշտակեցին ձեռքէ ձեռք»[15]: Այսպիսին է օտար ափերում ապաստան գտած հայի նկարագիրը, այդ է դառը իրականությունը և հենց սրանով է պայմանավորված այդ ճանապարհի անկումը, «որ երեք տեղ կը ցածնայ»: Այդպիսին է աղետը վերապրած, օտար ափերում հայտնված հայը՝ հոգեպես աղճատված ու բզկտված:

Այս ամենից հետո, թվում է, հույսն ու հավատը մղվում են երկրորդ պլան, քանի որ «ազգային մտահոգութիւն մը կայ, բան մը, որ միայն յուսահատութեան կրնայ հանգիլ»: Այն ճանապարհը, որն, ըստ հեղինակի, «երեք անգամ կը ցածնայ» խորհրդանշում է ազգային ջախջախումը, որից հետո մարդ միայն մահվան գաղափարին կարող է հանգել: Պայքարի առաջին օրերին իսկ ընկած հերոսի ոգին փորձում է ամեն կերպ արթնացնել երիտասարդին «յուսալքումից ու ստվերից», քանի որ «մեր հայրենիքին ընդերքէն ըմբոստ ճիչը բարձրացաւ, ու դուն հուսայ»: Ոգին ըմբոստություն է քարոզում Համբարձումին, փորձում շարժում մտցնել նրա ընդարմացած կյանքի մեջ, սակայն ապարդյուն. «Ազգովին պարտուեր ենք աներեւակայելի ջախջախումով՝ դուն այլեւս միայն մեռնիլ կ’ուզես: Բայց դուն յուսա՜ իմ Ատնան»[16]:

«Թերթիս կիրակնօրեա թիւը» գրքում Շահան Շահնուրն այդ նույն երևույթի մասին արտահայտվում է հետևյալ կերպ. «Բայց ըմբոստացումս պիտի մնար նման երազի մը, որ անիրագործելի է: Ճիշդ է , թէ ամէն վէրք,

[14] Շ. Շահնուր, Գեղարուեստական գործեր, Եր. «Ազգ»-2016, էջ՝362:
[15] Նույն տեղում:
[16] Շ. Շահնուր, Գեղարուեստական գործեր, Եր. «Ազգ»-2016, էջ՝ 363:

նոյնիսկ Հայուն վէրքը կը ճանչնայ մեղմացումի եւ սփոփումի շրջաններ, բայց միթէ ժամանակավոր չեն անոնք»[17]:

Ամեն անգամ սփոփանքին հաջորդում է դառը հուսալքությունը, քանի որ հայը կտրված է մայր հողից և նետված օտար ափեր. «Իր արիւնոտ արեւելքէն եկաւ մինչեւ հոս, ծանրագոյն արեւմունք: Բերին մինչեւ հոս, եւ ինք քալեց մինչեւ հոս, ծանրագոյն արեւմուտք»[18]: Այս ամենի մեջ հեղինակն ինչ-որ տեղ մեղադրում է հայի տեսակը՝ քննադատական հայացք նետելով ոչ վաղ անցյալի իրադարձություններին, դրանցում մեղավոր ճանաչելով ազգային ուժերի կատարած սխալները, նրանց քաղաքական կարճատեսությունը: Շահնուրի հոգում կուտակված դառնությունը ելք էր փնտրում և արդյունքում քննադատություններ տեղում ազգային ուժերի, երբեմն նույնիսկ հայ ժողովրդի հասցեին նետված դառը խոսքերով, ծայրահեղ գնահատականներով: «Ընդհանրապես Շահնուրի սերնդին շատ ծանր պարտականություն բաժին ընկավ՝ վերլուծել և հասկանալ Ցեղասպանության պատճառը»[19],- նկատում է գրականագետ Ազատ Եղիազարյանը: Ահա թե որտեղ է պետք փնտրել շահնուրյան խիստ, երբեմն նույնիսկ արտառոց թվացող ասացումների հիմքը: «Մենքում» հրատարակված հայտարարություններից մեկում Շահնուրը խիստ քննադատության է ենթարկում ազգային ուժերի կարճատեսությունը՝ մեղադրելով նրանց անտարբերության մեջ. «Կը նմանէիք մանուկի մը, որ քնացող գազանի մը վրայ խճաքարեր կը նետէ՝ բարկացած եւ դժգոհ ըլլալուն համար: Բայց նախքան այդ՝ ինքզինքը չէ պատսպարած վանդակորմին յետեւ: Նախքան այդ՝ չէ սորված գազանազսպութիւն: Հապա եթէ գազանն արթնա՞ր: Արթնցաւ»: Գրողի վիշտը սահման չի ճանաչում, երբ ստեղծագործության նյութը Մեծ աղետն է. «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածքում ցայտուն արտահայտված է այդ անդարման վիշտը. «Ջարդեցին մեզ: Երէցները ջարդեցին մեզ հազարներով, միլիոններով, անասուններու պէս եւ ավելի խժդժութեամբ: Այս սպանդին չկրցաւ դէմ դնել ոչ մէկը այն գաղափարներէն որոնց նուիրուած էինք աղէտէն առաջ: Ամէն ինչ որ գեղեցիկ էր, բարձր էր, դատապարտուեցաւ լռութեան, անշարժութեան…Եւ մենք մեր ակռաները կճրտեցինք խուլօրէն՝ ատելով ամէն բան, ամէն բան: Իմ տխուր Ժագօս...»[20]:

---

[17] Շ. Շահնուր, Թերթիս կիրակնօրեա թիւը, Պէյրութ,1958,էջ՝ 294:

[18] Շ. Շահնուր, Գեղարուեստական գործեր, Եր. «Ազգ»-2016, էջ՝ 364:

[19] Եղիազարյան Ա.,Հայոց նորագույն գրականություն.պատմության ուրվագիծ, Եր., 2004, էջ՝ 408:

[20] Շ. Շահնուր, Գեղարուեստական գործեր, Եր. «Ազգ»-2016, էջ՝ 366:

Այս ամենին դիմակայելու միակ միջոցն, ըստ Շահնուրի, սերն է: «Ցեխ ու խավարով» շրջապատված հերոսի միակ փրկությունը սիրելն է. «Սիրէ՛ գործելու համար, սիրէ՛ սիրելու համար», միայն ադկերպ կարելի է գոյատևել ու պայքարել: Ահա թե ինչու ոգու հեռանալուց հետո տղան շարունակ կրկնում է Հույս և Սեր բառերն ու իր փրկության հույսը կապում հեթանոս աստվածուհու՝ Անահիտի հետ: Նա է, որ իր պատկերացմամբ պիտի համախմբի ցիրուցան եղած հայերին «բոլոր քառուղիներէն, ծովափներէն, բոլոր լեզուներէն»: «Աղերսս կ՚ուղղեմ քեզի, Հայոց Անահիտ, գեղափայլ, աստուածիմաստ Անահիտ: Իջի՛ր կրկին հոտիդ մէջ, փառքդ զեղու Հայորդիներուն վրայ, գրաւէ դարձեալ քու թափուր բագինդ: Դի՛ր, դի՛ր լուսապսակդ մեր ցնցոտիներուն շուրջ, մեր վատութիւններուն, մեր ուրացումներուն շուրջ: Այո՛, սէրը նուազած է մեր մէջ, բայց չէ անյետացած, հոյսը նուազած է մեր մէջ, բայց չէ ցամքած»[21]:

Սակայն Անահիտ աստվածուհին էլ հարալեզների նման դավաճանել է հայերին և մենակ թողել պատմության քառուղիներում. «…մենք խմբովին վերելքի մը մէջ էինք մինչեւ երէկ, բայց ահա որ չաստուածները մեզ դաւաճանեցին, Անահիտները մեզ ուրացան: Եւ այլեւս ամէն բան անօգուտ կ՚երեւայ Հայութեան, ան ընելիք չի տեսներ եւ կը լքէ ինքզինքը, կը նուաղի»[22]: Շահնուրի կարծիքով՝ հենց այս «ընելիքի» բացակայությունն է պատճառը, որ հայը նահանջում է՝ ուրանալով իր աստվածներին, իր նախնիներին: Եվ այս տխուր ու անմխիթար վիճակից հային կարող է փրկել միայն հրաշքը՝ «Համբարձումին հրաշքը», բայց երիտասարդն էլ «անկողնին վրայ» է, ուստի և շատ հեռու է այդ թվացյալ փրկությունը:

Պատմվածքում անշուշտ հակասական են շահնուրյան մոտեցումները. մի դեպքում նա հավատում է այն աղոտ լույսին, որ պիտի իջնի և վառվի համատարած անտարբերության մեջ, հավատում է, որ կա «առավոտ մը, զոր դեռ չէ դիմավորած աքաղաղ», մյուս դեպքում սակայն անհնար համարելով համբարձման հրաշքը, ազգային վերածննդի գաղափարը վատառողջ է համարում՝ «բան մը, որ միայն յուսահատութեան կրնայ հանգիլ»:

Ի վերջո հեղինակը, թվում է, արդարացնում է Համբարձումին (որ հենց ինքը՝ Շ. Շահնուրն է) և ողջ ուծացող երիտասարդությունը. «Համբարձումին համար անհրաժեշտ էր հեռանալ վատառողջէն, ազգայինէն, հայէն: Պետք էր լքել հայը: Որքան ատեն որ կ՚ըսէր, սէր չկայ մեր մէջ, այսինքն հայը իր

[21] Նույն տեղում, էջ՝ 369:
[22] Նույն տեղում, էջ՝ 373:

ազգակիցը չի սիրեր, որքան ատեն որ հայը իր ազգային փրկութեանը մասին այլևս հոյս չունի եւ ատով իսկ ոչինչ կ'ընէ, պէտք է հեռանալ Հայէն»[23]:

Օտարության մեջ երիտասարդ գրողն ի վիճակի չէ պահպանել իր ազգային հատկանիշներն ու սովորույթները և ստիպված է ընդունել իր պարտությունը. «Գիտէր թէ կան իրեն նման ուրիշ մտաւորական երիտասարդներ, որոնք նմանապէս կը տառապին Հայութեան ճակատագրով»[24],- եզրակացնում է հեղինակը: Սփյուռքահայ գրականության հերոսն ու հեղինակը հաճախ ի վիճակի չեն լինում դուրս գալ փակուղուց. «Հայակենտրոնը դեռ ելք չէ, հայօրէն ապրելու հեռանկարը մշուշոտ է. ամերիկահայը ամերիկանանալու ճանապարհին է, նույնը՝ ֆրանսահայը, արգենտինահայը, եւ այսպէս շարունակ»[25],- նկատում է Ս. Դանիելյանը: Շահնուրն իր հերոսից ավելին չի էլ սպասում, քանի որ «ինք պարզապէս մարդ էր, ինչպէս ես, ինչպէս դուն»: Արձակագիրը վերջնական վճիռ չի կայացնում, գեղարվեստական ամփոփում չի անում՝ շատ բան թողնելով ընթերցողին՝ մեր կյանքի ողբերգական երևույթների փիլիսոփայական վերլուծման և գնահատման համար: Նրա ասելիքի անավարտությունը դառնում է նախորդ դարից եկող դառը հաղորդագրություն, ազգային մտահոգություն այն մասին, որ երևույթը մեծանալու է ձնագնդիկի նման՝ ահագնանալով և կլանելով այն ամենը, ինչ մնացել է ազգայինից:

«Հարալեզներուն դավաճանությունը» Շահան Շահնուրի՝ նահանջի թեմայով գրված լավագույն ստեղծագործություններից է, որն իրավամբ կարելի է այս գրքի գաղափարական ընդհանրացումը համարել:

Տ. Աշչյան

Ամփոփում

Շահան Շահնուրի ստեղծագործությունը մեր առջև բացում է արտասովոր ու ինքնատիպ գրողի կերպարը, որի մտածողությունը ստիպում է լրջորեն վերաբերվել նրա գրչին պատկանող բառին ու արտահայտությանը: Հեղինակի բոլոր գործերում երևակվում է ներկայի համատարած անտարբերությանը չենթարկվող, տևականորեն ելքեր փնտրող (երբեմն անգամ ոչ ավանդական ուղիներ) ու հաճախ արտառոց եզրահանգումներ անող մտավորականը: Նրա փոքր արձակում առանձնանում է «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածքը, ուր

[23] Շ. Շահնուր, Գեղարուեստական գործեր, Եր. «Ազգ»-2016, էջ՝ 376:
[24] Նույն տեղում, էջ՝ 372:
[25] Դանիէլյան Ս., Միջուկի տրոհումը, Եր., 2011, էջ՝ 184:

հեղինակը խորհրդանիշների համակարգը՝ իբրև գեղարվեստական ճանաչողության հուն, հասցրել է կատարելության: Ինքնատիպ և միևնույն ժամանակ խորհրդանշական է պատմվածքի խորագիրը. հարալեզները հնուց ի վեր հայտնի են եղել իբրև նվիրվածության և հավատարմության խորհրդանիշներ, որոնք, ցավոք, ի վիճակի չեն եղել փրկություն բերել: Ըստ էության՝ պատմվածքի հերոսն էլ ներկայացված է իբրև հենց այդ հարալեզներից մեկը, որ բոլոր հայ երիտասարդների նման նահանջող տեսակ է, այսինքն՝ դավաճանող հարալեզ:

Т. Ашчян

Резюме

Произведение Шагана Шагнура перед нами открывает образ необычного и своеобразного писателя, чье нестандартное мышление заставляет серезно относится к любому слову и выражению, пренадлежавшему его перу. Во всех работах автора, будь это литературно-художественные произведения или публицестическо-критические статьи, проявляется образ неподдающегося вездесущему безразличию, продолжительно ищущий выходы (порой даже нетрадиционные пути) и делающий нестандартные заключения мыслителя. В его малой прозе выделяется рассаказ «Предательство аралезов», где автор систему символов довел до превосходства-как течение литературного познания. Амбарцум, герой рассказа, олицетворение целого армянского народа, точнее-армянской диаспоры. Своеобразен и то же время символичен заголовок рассказа: аралезы с давних времен были известны как символы преданости, которые к сожелению не в силах были принести спасение. По существу, герой представлен как именно один из этих аралезов.

T. Ashchyan

Summary

Collection of short stories of Shahan Shahnour reveals an extraordinary and unique character of the writer, the thinking of whom makes us seriously react to each word and expression that belongs to him. In all works of the Author - literary and fiction, other publications and critical articles - the Intellectual that does not obey to pervasive indifference and hence tries to find long-lasting solutions by sometimes making extraordinary conclusions (sometimes trying to find uncommon, non-traditional ways of solution) is vivid. In terms of his short prose, the story *Treason of Aralezes* is worth to be highlighted. Here the Author uses the system of symbols as a literary cognitive approach transforming into perfection.

The leading character of the story – Hambardzum – is an all-inclusive character of all Armenians, especially of all migrating Armenians. The heading of the story is not only exceptional but rather symbolic, too. Historically *aralezes* were symbol of dedication and loyalty that, alas, were unable to bring salvation. In substance, the hero of the story is presented as one of those aralezes that by his type is a retreating character very similar to many young Armenians, i.e. a treasonous aralez. The story is saturated with powerful ideological inflow which requires a deep perception. The writer does not come into final conclusions or does not extend a literary summary by leaving the reader to make philosophic analysis and assessment of tragic events in real life.